

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ՎԱՉԱԳԱՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՖԱՆՏԱՍՏԻԿԱՅԻ ՈՃԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԻԲԵՐՓԱՆԿ ԺԱՆՐՈՒՄ
(Վ. Գիբսոնի ստեղծագործությունների հիման վրա)

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Ի. Մաթևոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Գ. Ռ. Գասպարյան
Բ.Գ.Թ., դոց. Գ. Հ. Մուրադյան


Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական
(Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. փետրվարի 17-ին ժամը 11:00-ին Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. հունվարի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Գիտաֆանտաստիկան գեղարվեստորեն հարուստ ու բարձրարվեստ, հասարակական արժեքի ու նշանակության առումով բարոյական և փիլիսոփայական մեծ խորք ունեցող ժանր է, որտեղ արձանագրվում են ոչ միայն գիտատեխնիկական զարգացման և տեխնոլոգիական առաջընթացի բոլոր տատանումները, այլև աշխարհում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունները: Այն ունի զարգացման իր օրինաչափություններն ու ու ինքնուրույն ընթացքը, և այդ ընթացքի արձագանքն է գիտաֆանտաստիկ կիրքերփանկ ժանրը, որն ըստ էության ներկայացնում է տրամաբանականի ու երևակայականի, իրականի ու անիրականի մի համաձուլված կառույց:

1980-ականներին ստեղծվելուց իր վեր՝ կիրքերփանկը փորձում է քննել անսահման համացանցը, որն իր ուղին է հարթում հասարակական տարբեր գործընթացների միջոցով: Այստեղ մտածական խոսքը գրեթե միշտ առաջ է անցնում ժամանակից, կանխատեսում կյանքում կատարվող փոփոխությունները: Այն սոսկ չի հետևում գիտության զարգացմանը, այլ կազմավորվում, ինքնահաստատվում ու ավելի է կատարելագործվում իր սեփական գործառական և ռճական առանձնահատկությունների շնորհիվ:

Ներկա ստենախոսության ուսումնասիրության **առարկան**՝ ժամանակակից գիտաֆանտաստիկայի կիրքերփանկ ժանրն է, որն իր կազմավորման ներքին յուրահատուկ առանձնահատկություններով պայմանավորված, խոսքում ունի իր ինքնուրույն տեղն ու դերը որպես լեզվի ինքնատիպ, գեղարվեստական և գիտական խոսքային տարրերի վրա հիմնված գործառական դրսևորում:

Չեռագոտության **փաստական նյութը** ժամանակակից ամերիկյան գիտաֆանտաստիկայի հեղինակ Վիլյամ Գիբսոնի կիրքերփանկ եռագրությունն է՝ *Neuromancer*, *Count Zero*, *Mona Liza Overdrive*, որը ներկայացնում է մարդ-տեխնիկա հակադրամիասնությամբ միահյուսված մի նոր աշխարհ: Գիբսոնի ստեղծագործությունները «կերտում» են նշված հակադրամիասնության վառ նկարագիրն ու իրական պատկերը: Նյութի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտաֆանտաստիկան, հատկապես կիրքերփանկը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժամանակակից աշխարհում, քանի որ այն, լեզվական յուրօրինակ միավորների կիրառությամբ, թույլ է տալիս խոսել բազմաբնույթ երևույթների մասին՝ օգնելով մարդուն յուրացնել ապագայի նոր, անհայտ ու անձանոթ աշխարհը նոր գիտական տեղեկատվության լույսի ներքո: Հայտնի է, որ գիտության ու տեխնիկայի առաջընթացը նպաստում է լեզվական համակարգում նոր հասկացությունների ի հայտ գալուն՝ խթանելով նոր եզրույթների և եզրույթաբանական տարբեր միավորների առաջացման գործընթացը: Այս հանգամանքը առավելապես կապված է կիրքերփանկ գրական ժանրի հետ, երբ հեղինակն իր ստեղծագործության մեջ նկարագրելով որևէ նոր, մտացածին երևույթ, տալիս է նաև այդ երևույթի հասկացական անվանումը:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է այն իրողությամբ, որ այսօր կիրերփանկը առանցքային նշանակություն ունի հասարակական կյանքում և մեծ դեր է կատարում ժամանակակից անզլերենի զարգացման գործում: Որպես համացանցային գործընթացների պատկեր, կիրերփանկ գրական ժանրի առանձնահատուկ հասկացական տարրերն են կիրերտարածությունը, վիրտուալ իրականությունը, արհեստական ինտելլեկտը, կիրորգները, կենսառոբոտները, համակարգչային կորպորացիաները, ցանցահեռները, կենսաիմպլանտները, թմրանյութերը: Որոշ կիրերփանկյան ստեղծագործություններում, ինչպես նաև մեր փաստական նյութում, գործողության մեծ մասը տեղի է ունենում կիրերտարածության մեջ, որը փորձում է վերացնել օբյեկտիվ իրականության և վիրտուալ իրականության միջև առկա սահմանը: Գիտաֆանտաստիկայի այս ժամանակակից դրսևորումը ապագայի, ներկայի և անցյալի գիտական ու սոցիալական վարկածների պատկերավոր արտահայտությունն է, ժամանակակից կյանքի իրական երևույթների տրամաբանական շարունակության նկարագրությունը, որն արտահայտվում է ժամանակակից անզլերենի արդիական ոճով ու լեզվական միավորներով, որոնց քնությունը, կարծում ենք, մեր օրերում արդեն դարձել է հետազոտական անհրաժեշտություն:

Նետազոտության **նպատակն** է բացահայտել և պարզաբանել կիրերփանկյան խոսքային դրսևորման գործառական-ոճական առանձնահատկությունները, ուսումնասիրել արտալեզվական գործոններով պայմանավորված լեզվական տարրերի բառային և ձևաբանական յուրահատկությունները: Աշխատանքը նպատակաուղղված է ևս մեկ անգամ հաստատելու այն տեսակետը, որ գիտաֆանտաստիկ ժանրը՝ մասնավորապես կիրերփանկը, ունենալով հարուստ ու բազմազան ժամանակակից թեմատիկա, իրոք կարևոր ու հետաքրքրական նյութ է լեզվաբանների, գրականագետների, գիտնականների, հասարակական և սոցիալական երևույթներով հետաքրքրվող ցանկացած հետազոտողի համար:

Այս նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**:

1. Պարզաբանել գիտաֆանտաստիկայի, մասնավորապես դրա կիրերփանկ ժանրի գործառական էությունը, սկզբնավորման և զարգացման ուղիները:
2. Հենվելով մինչև այժմ առկա տեսական և գործնական ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ պարզաբանել և որոշարկել կիրերփանկ ժանրի տեղն ու դերը գործառական ոճերի համակարգում:
3. Վեր հանել լեզվական այն միավորները, որոնք հանդես են գալիս որպես կիրերփանկը պայմանավորող և բնութագրող ժանրակազմիչ տարրեր:

4. Քննարկել ժանրին բնորոշ իրական և հորինված եզրույթները որպես հաղորդվող տեղեկատվության իմաստաբովանդակային անհրաժեշտ տարրեր:
5. Քննության առնել և դասակարգել գիտաֆանտաստիկ ժանրին բնորոշ եզրույթների տեսակները:
6. Պարզաբանել կիբերփանկ ժանրը բնութագրող ժարգոնային և սլենգային եզրույթների կիրառության առանձնահատկությունները:
7. Ուսումնասիրել այս ժանրում գործածվող եզրույթային տարրեր պարունակող հապավումներն ու նորաբանությունները, որոնք առանցքային գործածություն ունեն և հանդես են գալիս որպես ժանրի ռճատարբերակիչ միավորներ:

Ատենախոսության մեջ որպես գիտաֆանտաստիկ կիբերփանկյան յուրօրինակ լեզվի քննության լավագույն **մեթոդներ** են ծառայել ցանկացած հետազոտության համար անհրաժեշտաբար կիրառելի խոսքային նյութի որակական և քանակական վերլուծության մեթոդը, ինչպես նաև գործառական-ռճական ուսումնասիրություններում արդեն իսկ իր մշտական և կայուն տեղն ապահոված լեզվառճական վերլուծության մեթոդը: Գիտաֆանտաստիկ կիբերփանկյան տերմինների քննության ընթացքում կիրառվել է նաև ժամանակակից գիտական ուսումնասիրություններում լայն տարածում գտած տաքսոնոմիկ մեթոդը:

Ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ ուսումնասիրության առարկա են դարձել գիտաֆանտաստիկայի կիբերփանկ ժանրը և ժանրի հիմնադիր Գիբսոնի ստեղծագործությունները՝ որպես հաղորդման և ներգործման գործառույթների հակադրամիասնության վրա հիմնված ժամանակակից դիսկուրս, և հատկապես այդ ժանրում իրացվող եզրույթների ու նորաբանությունների հետազոտությունը, որը նոր է, կարևոր և խոստումնալից: Կիբերփանկյան և հատկապես գիբսոնյան գիտաֆանտաստիկ տերմինները հետաքրքրական են և լայն տարածում ունեն համաշխարհային գիտատեղեկատվական ոլորտներում: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ տերմինաստեղծման գործում գիտաֆանտաստիկ գրական ժանրի հեղինակները հետևում են ոչ միայն որոշակի լեզվական և ռճական նորմերի, այլև ժամանակակից գիտատեխնիկական բառապաշարին բնորոշ եզրույթների, հապավումների, նորաբանությունների ստեղծման կանոններին:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է այն հանգամանքով, որ հենվելով լեզվական նյութի քննության արդյունքների վրա, փորձ է արվում պարզաբանելու, ճշգրտելու ու հստակեցնելու կիբերփանկ ժանրի գործառական առանձնահատկությունները և տվյալ ժանրը բնութագրող լեզվական և ռճական յուրահատկությունները, որոնց լուսաբանումն իր նպաստը կրերի լեզվի գործառական տեսության հետագա զարգացմանը, նաև անգլերենի ժամանակակից կիրառություններից մեկի՝ գիտական լեզվին առնչվող

գեղարվեստական խոսքի առավել արդյունավետ ընկալմանն ու մեկնաբանմանը: Ուրիշ խոսքով տեսական առումով սույն ուսումնասիրությունը փորձ է առաջադրված հարցադրումների, բացատրությունների և հիմնավորումների միջոցով նպաստելու ժամանակակից անգլերեն գիտաֆանտաստիկ կիբերֆանկ գրական ժանրի գործառնության մեկնաբանմանը, ինչպես նաև գործառական ոճերի տեսության զարգացմանը:

Ատենախոսության **գործնական արժեքն** այն է, որ սույն հետազոտությունը կարող է օգտակար լինել գործառական ոճագիտության բնագավառի այլ ուսումնասիրությունների համար և արդյունավետ կիրառություն գտնել ոչ միայն տերմինաբանության ոլորտում, այլև լեզվի ճանաչողական կառույցների գործառնության և ուսումնասիրության բնագավառում իրականացվող հետազոտական աշխատանքներում: Այն կարող է նաև նպաստել անգլերենի գործնական ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ժամանակակից դասագրքերի ստեղծմանը, անգլերեն լեզվի դասավանդմանը, ինչպես նաև օգնել տեղեկատվական տեխնոլոգիաների եզրույթաստեղծմամբ զբաղվող մասնագետներին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ենթագլուխներից և եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների և համացանցային կայքերի ցանկից և կիբերֆանկյան ամենատարածված եզրույթները ներկայացնող հավելվածից:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության հետ կապված հիմնահարցերն ու խնդիրները: Հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, մեթոդաբանական հիմքը, գործնական նշանակությունն ու տեսական արժեքը, որոշարկվում ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլուխը («Գիտաֆանտաստիկ ժանրը որպես գործառական-ոճական ուրույն դրսևորում») բաղկացած է երկու ենթագլխից («Գիտաֆանտաստիկ ժանրի քննության տեսապատմական նախադրյալները», «Գիբերֆանկի ձևավորմանն ու զարգացմանն ուղիները»): Այս գլխում հակիրճ անդրադարձ է կատարվում գիտաֆանտաստիկայի ձևավորմանն ու զարգացմանը, գիտական և գեղարվեստական հաղորդակցության ոճատարբերակիչ առանձնահատկություններին, դրանց միաձույլ դրսևորումներին, որոնցից մեկն էլ գիտաֆանտաստիկ գրականությունն է: Գիտաֆանտաստիկայի ձևավորումը ժամանակակից գրականության մեջ հիմնականում կապվում է անգլիական և ամերիկյան 1940-1970-ականների գրական այն ստեղծագործությունների հետ, որոնցում իրենց արձագանքն են գտել ոչ միայն գիտատեխնիկական զարգացման և տեխնոլոգիական առաջընթացի բոլոր տատանումները, այլև աշխարհում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունները: Բնական է, որ նշված արտալեզվական գործոնների ազդեցության արդյունքում գիտաֆանտաստիկական

պետք է ստեղծագործական զարգացում ապրեր և հանդես գար ժանրային-գործառական նոր դրսևորումներով, որոնցից մեկն էլ մեր ուսումնասիրության առարկան է՝ գիտաֆանտաստիկայի 1980-ականներին առաջացած կիբերփանկ ժանրը: Անցնելով երևակայության ու բանականության սահմանը, կիբերփանկը ներառում է մշակույթը, համակարգչային արդյունաբերությունը և պոստմոդեռն կիբերնետիկ գաղափարները: Հետևելով գիտատեխնիկական տեղեկատվական առաջընթացին՝ այն քննում է գիտատեխնոլոգիական հայտնագործությունների ու վարկածների ազդեցությունը մարդու և հասարակության վրա և ներկայանում է ընթերցողին հուզականի և ճանաչողականի տեսական ու գործնական դիալեկտիկ կապով: Այսօր արդեն կիբերփանկն ունի իր սեփական ենթաժանրային դրսևորումները, որոնցից են սթիմփանկը, դիզելփանկը, դեկոփանկը, բիոփանկը, նանոփանկը, որոնք գիտական և գեղարվեստական լեզվական տարրերի միաձուլվ կիրառությամբ պատկերում են, թե ինչպես կարող են գիտությունն ու բարձր տեխնոլոգիաները, մխրճվելով մարդկային կյանքի մեջ, ձևավորել անպաշտպանության և անիրավության մթնոլորտ, նպաստել մարդու շահագործմանը մարդու կողմից: Ոճական հակադրությունների միահյուսման գեղեցիկ պատկեր է գիբսոնյան հետևյալ համատեքստը.

*Now he slept in the cheapest coffins, the ones nearest the port, beneath the **quartz-halogen floods that lit the docks all night like vast stages:** where you couldn't see the lights of Tokyo for the glare of the **television sky**, not even the towering **hologram logo of the Fuji Electric Company**, and Tokyo Bay was a **black expanse where gulls wheeled above drifting shoals of white styrofoam**. Behind the port lay the city, factory domes dominated by the vast cubes of corporate arcologies. Port and city were divided by a narrow borderland of older streets, an area with no official name. Night city, with Ninsei its heart. By day, **the bars down Ninsei were shuttered and featureless, the neon dead, the holograms inert**, waiting, under the **poisoned silver sky**.*

(*Neuromancer*, p. 6-7)

Հատվածում ակնհայտորեն գործածվել են գիտաֆանտաստիկ ժանրին բնորոշ իրական և հորինված գիտական տերմիններ՝ *quartz-halogen (halogen եզրույթն օգտագործվում է քիմիայի/ֆիզիկայի բնագավառում)*, *hologram logo (logo-ն հատկապես գործածական է համակարգչային ոլորտում)*, *neon* (այս եզրույթը լայն տարածում ունի ֆիզիկայի/քիմիայի ոլորտում), *coffin* (գիբսոնյան այս եզրույթը ապագայի համակարգչայնացված բնակատեղ է խորհրդանշում): Նշված եզրույթները լրացուցիչ երանգավորում են ստանում հատկապես հետևյալ փոխաբերական կապակցություններում՝ *the neon dead, the holograms inert, poisoned silver sky* և *television sky*: Վերջին շարությամբ *sky-երկինք* և *television-հեռուստացույց* միավորները անհամատեղելի կապակցելիություն ունեն, բայցևայնպես համատեքստի վերիմաստային մակարդակում

ոճականորեն հզոր ներուժով ներկայացնում են հալոգենային լուսավորության մեջ պարուրված Տոկիոն, որը հեռուստացույցի ալիքների պես արագ փոփոխվող գունազարդ երանգներ ունի: Առանձնակի ուշադրության է արժանի *the bars down Ninsei were shuttered and featureless* աույթը, որը, առանց լայն համատեքստի, անհնարին է ընկալել: Անհրաժեշտ է նախօրոք իմանալ, որ վեպի գործողությունները սկսվում են Ճապոնիայի Չիբա քաղաքի դարեր ի վեր գործող բարերում (*the bars down Ninsei*), որոնք հին են, խարխուլ ու անդեմ (*shuttered and featureless*), որտեղ օտարերկրացիները հաճախում են ճապոնական *կիրին* (գարեջրի տեսակ) խմելու համար: Համատեքստում կիրառված տեղանուններն ու ու կազմակերպությունների անունները պատահական չեն՝ *Tokyo, Tokyo Bay, Fuji Electronic Company*, դրանք կարող են համարվել ճապոնական ներկայիս և ապագայի տեխնիկայապես գերհագեցած քաղաքներին ուղղված ակնարկներ: Առավել արտահայտիչ են Տոկիոյի ծովածոցը որպես լայնածավալ մթություն ներկայացնող փոխաբերությունը (*Tokyo Bay was a black expanse where gulls wheeled above drifting shoals of white styrofoam*) և լուսավորված նավահանգիստը որպես լուսարձակներով պատված բեմ ներկայացնող գեղարվեստական համեմատությունը (*quartz-halogen floods that lit the docks all night like vast stages*): Գեղարվեստական արտահայտչամիջոցներով ու ոճական հնարներով հարուստ այս համատեքստում մի քանի գիտաբառեր հանդես են գալիս որպես ոճական նշույթներ, որոնք ցույց են տալիս, որ գործ ունենք գիտականի և գեղարվեստականի միաձուլյալ դրսևորում ներկայացնող գիտաֆանտաստիկ համատեքստի հետ:

Երկրորդ գլուխը («Եզրույթների կիրառության առանձնահատկությունները կիբերփանկ ժանրում») բաղկացած է երկու ենթագլխից: Այս գլխում քննարկվում են գիտատեխնիկական հեղափոխության արդի դարաշրջանում գիտության, տեխնիկայի, արդյունաբերության տարբեր ճյուղերի աննախադեպ զարգացման արդյունքում լեզվի բառապաշարում նոր եզրույթների առաջացման, մշակման ու կատարելագործման գործընթացները, եզրույթների լեզվական ուսումնասիրության անհրաժեշտությունը, ժամանակակից եզրույթահամակարգերի տարբերակման մեթոդները, կիբերփանկյան եզրույթային համակարգին բնորոշ եզրույթների տարատեսակ իմաստային և կառուցվածքային խմբերը, վերջիններիս գործառական/լեզվա-ոճական առանձնահատկությունները խնդրո առարկա ժանրում:

Այս գլխի առաջին ենթագլխում («Կիբերփանկի եզրույթային համակարգի առանձնահատկությունները») անդրադարձ է կատարվում ընդհանուր եզրույթաբանության (ըստ որի պետք է հաշվի առնել տվյալ լեզվի բոլոր եզրույթների ամբողջությունը, օրինակ՝ անգլերենի եզրույթաբանություն) և մասնավոր եզրույթաբանության (ըստ որի պետք է հաշվի առնել առանձին բնագավառի մասնավոր եզրույթների ամբողջությունը, օրինակ՝ քիմիային, գրականագիտությանը կամ լեզվաբանությանը հարող եզրույթների

ուսումնասիրությունը) տարբերակման անհրաժեշտությանը: Հետևաբար, կարևորվում է եզրույթների այս կամ այն եզրույթահամակարգին պատկանելու փաստը:¹ Եզրույթահամակարգերը ստորաբաժանվում են եզրույթաբանական միկրոհամակարգի (եզրույթաբանական առանձին համակարգ) և եզրույթաբանական մակրոհամակարգի (եզրույթաբանական ընդհանուր համակարգ):² Այս հասկացությունները սերտորեն առնչվում են եզրույթահամակարգային ևս երկու ստորաբաժանման՝ եզրույթաբանական միջհամակարգի և եզրույթաբանական համընդհանուր համակարգի հետ: Հարկ է նշել, որ եզրույթահամակարգերի միջև խիստ անջրպետ չկա: Գիտական եզրույթներն իրարից մեկուսացված չեն, և միևնույն եզրույթը կարող է ներթափանցել այլ եզրույթահամակարգեր կամ ընդհանրանալ՝ հանդես գալով որպես գիտական եզրույթաբանական միավոր:³

Եզրույթաբանական համակարգում եզրույթները ստեղծում են օբյեկտիվ իրականության պատկեր, որն անհրաժեշտ է ճանաչողության և աշխարհի յուրացման գործընթացում:⁴ Եզրույթի գործառույթներից մեկը էվրիստիկ գործառույթն է, գիտական ճանաչողության և ճշմարտությունը բացահայտելու գործառույթը: Կարելի է պնդել, որ պատկերավոր լեզվական տարրերին զուգահեռ՝ կիրքերփանկն օգտագործում է մեծ քանակությամբ եզրույթներ վերը նշված գործառույթն իրացնելու համար:

Ընդհանրապես գիտաֆանտաստիկ և մասնավորապես կիրքերփանկյան եզրույթային համակարգը տաքսոնոմիկ է, այսինքն այն ճյուղավորվում է՝ ստեղծելով եզրույթների հետևյալ բնորոշ խմբերը.

1. Կվազիեզրույթներ, որոնք լայն կիրառություն ունեն գիտաֆանտաստիկ գրականության մեջ՝ *zomby* (*մարդ-ռոբոտ*), *android/droid*, *cyborg* (*կիրբորգ*, *կիրքերնետիկական օրգանիզմ*), *nanotech* (*նանտեխնոլոգիա*), *ornithopter* (թափահարող թևերով թռչող մեքենա) և այլն:
2. Պրոֆեսիոնալիզմի տարրերով եզրույթներ՝ *cylinder* (տեխ. և մաթ. *գլան*), *x-ray/x-rays* (*իբր ճառագայթներ*, *ռենտգենյան ճառագայթներ*), *enzyme* (կենսաքիմ. *խմորիչ*):

¹ Աղայան Է.Բ. *Տերմինազիտություն*: Երևան, ԵՊՀ հրատ., 1978:

² Головин Б.Н., Кобрин Р.Ю. *Лингвистические основы учения о терминах*. М., Высшая школа, 1987; Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն: Երևան, ԵՊՀ հրատ., 2007:

³ Коршунов С.И., Самбунова Г.Г. *Краткое методическое пособие по разработке и упорядочению научно-технической терминологии*. М., Наука, 1979.

⁴ Grinev S.V. *Some semiotic aspects of terminology science*. // The 11th European Symposium, М., 1997.

3. Փոխառություններ, որոնք բաժանվում են երկու խմբի՝ սեփական եզրույթներ և օտար եզրույթներ:⁵ Փոխառությունները վերցվում են հետևյալ ոլորտներից. տվյալ լեզվի ընդհանուր գործածական բառաֆոնդից կամ գիտատեխնիկական այլ բնագավառներից, օտար լեզուներից, այլ եզրույթահամակարգերից (եզրույթների միջհամակարգային փոխառություն, եզրույթների կրկնակի փոխառություն), ինչպես օրինակ՝ *carbon* (քիմ. *ածխածին*, էլեկտր. *ածխային էլեկտրոդ*): Փոխառությունների երկրորդ խմբի մեջ են մտնում նաև ծածկաբառ-փոխառությունները, այսինքն այն եզրույթները, որոնք պարունակում են միջազգայնորեն գործառվող լեզվատարրեր:
4. Բնութագրվողներ, որոնք լայն տարածում ունեն գրեթե բոլոր լեզուներում և դիսկուրսներում:
5. Հիբրիդեզրույթներ, որոնցից կարելի է նշել *cybercrime, cyberdeck, cyberspace, biomedical, microchannel, motorhead, high-tech, neuroelectronic, software* միավորները, այսինքն կիբերփանկյան այն տերմինները, որոնք կազմված են մի կողմից փոխառնված (հիմնականում հունարենից ու լատիներենից) կամ միջազգային, մյուս կողմից՝ անգլերեն լեզվական տարրերից:

Հարկ է նշել, որ հիբրիդեզրույթները կիբերփանկում լայն կիրառություն ունեն և հանդես են գալիս որպես ռճատարբերակիչ տարրեր:

Կիբերփանկյան բառապաշարի հետևյալ իմաստային շերտերի առանձնացումը հեշտացնում է եզրույթների ուսումնասիրության գործընթացը.

1. անձնանուն եզրույթներ, որոնք ցույց են տալիս, որ տվյալ հասկացությունը անվանվում է գիտնականի կամ որևէ այլ, քիչ թե շատ հայտնի անձի անունով, օրինակ, գիտաֆանտաստիկ *dysons sphere* եզրույթը ստեղծվել է ի պատիվ ֆիզիկոս Ֆրիման Դիզոնի,
2. եզրույթներ, որոնք հիմքում ընկած են ժարգոնային և սլենգային տարրեր՝ *Bagman (հանցագործ), Bithead (համակարգչային հանճար, խելք), Dirtnap (մահ), Face (մատրիցային, կիբերտարածությանը միանալը), Gander/goose (կամազուրկ անձնավորություն, ղզիկ),*

⁵Капанадзе Л.А. *Особенности номинации в области научно-технической терминологии. Функционирование терминов науки и техники в общелитературном языке XX века.* // Русский язык и советское общество: Социолого-лингвистическое исследование. М., 1968; Будагов Р.А. *Очерки по языкознанию.* М., 1953; Մարգվյան Ա. *Դանոնի և կիրարկության հարաբերությունը հարավ-կովկասյան լեզուների տերմինաբանության մեջ.* Հանրալեզվաբանության դասընթաց: Երևան, ԵՊՀ հրատ, 2002:

3. բացասական երանգավորում ունեցող, ստորացուցիչ, վիրավորական (derogatory) եզրույթներ. *AniMan, AniMen* (կենդանու քանդակի նման մարմին ունեցող մարդ), *Collar* (սպիտակ օձիքավոր աշխատող, սովորաբար մեզակորպորացիայի ցածրաստիճան աշխատող), *Alien* (նվաստացուցիչ եզրույթ տիեզերքում ապրողի համար, օտար), *Chrome Bangers/C-SWAT* (հոգեկան հիվանդների դեմ պայքարող խումբ կամ խմբի անդամ), *Cylon* (կորպորատիվ անվտանգության անձնակազմ կամ անձնակազմի անդամ), *Dirty* (ցածր տեխնոլոգիայի մասին, օրինակ՝ թուղթ, մատիտ, նաև՝ ռադիոակտիվ առումով աղտոտված), *Dough boy/girl* (չափից շատ զենք ու զինամթերք կրողի մարդ կամ կին, նաև՝ հոգեկան հիվանդ), *Foot, Feet* (նվաստացուցիչ եզրույթ ոստիկանի համար), *Gajjin* (օտարներին կոչելու ճապոներեն նվաստացուցիչ բառ), *Net Fet/Net Fetishist* (*ցանցայաշտ*, մարդ, ով իր կյանքը բացառապես ցանցի հետ է կապում):

Կիբերփանկյան եզրույթահամակարգում առավելապես կարևորվում են եզրույթատարբերը: Եզրույթատարբերն այն միավորներն են, որոնք ունեն ինքնուրույն նշանակություն և մտնում են պարզ կամ բարդ կառուցվածք ունեցող եզրույթների կազմի մեջ:⁶ Կիբերփանկ ժանրը հազեցած է այնպիսի եզրույթավորված կապակցություններով, ինչպիսիք են *digital display, megabytes of hot ROM, logarithmic spirals, data transfer Bockris Systems GmbH, microscopic membranes, terminal overdrive, cyberspace deck, gliding cursor, magnetic bolts, magnetic tape, computer nexus, matrix deck, endorphin inhibitors, logarithmic spirals, genetic engineering, sense net, digital number* և այլն: Ընդ որում մինևույն կապակցության մեջ կարող են տարբերակվել մեկ և ավելի եզրույթատարբեր, օրինակ *digital display* որոշչային շարույթում առկա են համակարգչային ոլորտին պատկանող երկու՝ *digital* և *display* եզրույթատարբերը, *polychrome of the virus program* կապակցության մեջ առանձնացնում ենք երեք եզրույթատարբեր, որոնցից *virus* և *program* տարբերը պատկանում են համակարգչային եզրույթների շարքին իսկ *polychrome* եզրույթի *chrome* տարբեր՝ քիմիայի ոլորտին: Մինևույն ժամանակ *polychrome* եզրույթի մեջ եզրույթատարբեր են համարվում նաև արմատական *chrome* ձևույթը և *poly* նախածանցը: Եզրույթատարբերը բնորոշելիս կարևոր է հետևյալ հատկանիշների տարբերակումը. տարբերի անբաժանելիություն, անվանող հասկացության կամ նրա հատկանիշի համապատասխանություն, որոշ, այլ եզրույթահամակարգերից կախվածություն, գիտելիքի տվյալ ճյուղի եզրույթահամակարգերից կամ գիտելիքի խառը կամ հիմնային ճյուղերից

⁶ Лотте Д.С. *Изменение значений слов как средство образования научно-технической терминологии*. М., Наука, 1961.

կախվածություն:⁷ Փաստորեն եզրույթատարերը ավելի մեծ ձևաբանական կամ շարահյուսական կախվածություն ունեն քան եզրույթները, քանի որ եզրույթատարերը կարող են կայուն բառակապակցության մեջ հանդես գալ որպես բառի մաս կամ կապակցված բառ, մինչդեռ եզրույթը ներկայացվում է կամ բառով կամ բառակապակցությունով և նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես առանձին միավոր: Կիրբերփանկ ժանրի ուրույն ոճային առանձնահատկությունները հատկապես ակնհայտ են եզրույթային այն բառակապակցություններում, որոնք արտահայտում են մեկ ամբողջական միտք (*magnific bolt, matrix deck, human DNA, holographic paradigm, simstim construct, cybernetic memory, microscopic dart, cryogenic system, credit chip, central nervous system stimulants, neuroelectronic void of the matrix, the polychrome of the virus program, DNA coded in silicon*): Հատկանշական է, որ բառակապակցության մեջ առկա տարրերը եզրույթներ են, որոնք լայն տարածում ունեն ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի և հասարակական գիտությունների բնագավառներում:

Չնայած հարուստ գրականության առկայությանը՝ եզրույթի ձևակառուցվածքի առանձնահատկությունների վերլուծության հիմնահարցերը չի կարելի վերջնականապես լուծված համարել նախ և առաջ այն պատճառով, որ եզրույթակազմավորման ոչ բոլոր ժամանակակից միջոցներն են բավարար չափով ուսումնասիրված: Կոնկրետ մեր դեպքում անհրաժեշտ է օգտագործել եզրույթագիտության ոլորտում կիրառվող մեթոդները՝ բացահայտելու համար կիրբերփանկյան ոճը պայմանավորող եզրույթների բոլոր առանձնահատկությունները:

Գիրսոնի ոճին բնորոշ են եզրույթների հետևյալ կառուցվածքային խմբերը. *Ing+N-telescoping segments, hallucinating psychotic, Part.2+N-C-shaped console, implanted lenses, Compound A+N-techno-criminal subculture, synth-voice chip, A+A+N-luminous digital display, Mitsubishi Bank chip, internal virus system, A+N+N-highspeed drift and skid, genetic materials and hormones, A+Part.2+N=paint-scrawled brick, amber-tinted goggle, Part.2+Comp. A+N-polished black combat boots, stylized matte black longlegs, Part.2+A+N-idealized holographic vaginas, laminated foodhandling license*:

Կիրբերփանկ ժանրի առանձնահատուկ տարրերից են ժանրի ձևավորման ու զարգացման գործում կարևորագույն դեր կատարող հապավում-եզրույթները: Հապավումների՝ իբրև նոր եզրույթների ստեղծման եղանակի աննախընթաց կիրառությունը այս ժանրում պայմանավորված է գործնական պահանջով և գիտատեխնիկական հզոր առաջընթացով: Առավել տարածված են *AOL - America On Line, DNI - Direct Neural Interface, ICE - Intrusion Contermeasure*

⁷ Лейчик В.М. Терминоведение: предмет, методы, структура. М., ЛКИ, 2007.

Electronics, AI - Artificial Intelligence, DI - Digital Intelligence, IRC - Internet Relay Chat, UMS - Universal Matrix Standards գիրսոնյան հապավումները:

Ընդհանուր առմամբ եզրույթների կողմից իրացվող ճանաչողական, անվանողական, իմաստային, հաղորդակցական, գործաբանական և էվրիստիկ գործառույթների հետ կողք-կողքի իրացվող ներգործման գործառույթի շնորհիվ հաճախ կիրերփանկյան եզրույթները վերնշանային արժեք են ձեռք բերում: Մեծ է նաև էվրիստիկական գործառույթ իրացնող՝ գիտական ճանաչողությանն ու ճշմարտության բացահայտմանն ուղղված եզրույթների դերը այս ժանրում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Եզրույթների լեզվառճական առանձնահատկությունները կիրերփանկում») քննության են առնվում Վիլիամ Գիբսոնի եռագրության մեջ կիրառված եզրույթներին բնորոշ գործառական-ռճական առանձնահատկությունները, բացահայտվում այն բարդ բառային միավորները, որոնք, հեղինակի երևակայության արդյունք լինելով հանդերձ՝ առնչվում են գիտության և տեխնիկայի, մասնավորապես համակարգչային տեխնիկայի ոլորտին: Այսպես.

*At twenty-two, he'd been a cowboy, a rustler, one of the best in the Sprawl. He'd been trained by the best, by McCoy Pauley and Bobby Quine, legends in the biz. He'd operated on **adrenaline** high, a **byproduct** of youth and proficiency, jacked **into** a custom **cyberspace deck** that projected his disembodied **consciousness** into **consensual hallucination** that was the **matrix**. A thief, he'd worked for other, wealthier thieves, employers who provided the exotic **software** required to penetrate the bright walls of **corporate system**, opening windows into **rich fields of data**.*

(*Neuromancer*, p. 5)

Համատեքստում ուշադրություն են գրավում *adrenaline, byproduct, cyberspace deck, consciousness, consensual hallucination, matrix, software, corporate system, fields of data* եզրույթաբանական միավորները: Հերոսի գիտակցությունը ներդաշնակ պատրանքի մեջ է (*consensual hallucination*), այն է՝ մատրիցայի (*matrix*) մեջ, որն ապագա մարդ արարածի «բնակատեղն» է: *Matrix* եզրույթի իմաստային դաշտը հոմանշային հարաբերության մեջ է գտնվում *cyberspace* (*կիրերտարածություն*) և *network* (*համացանց*) միավորների հետ: Կիրերտարածությունը համակարգչային հաղորդակցության ցանցային միջանկյալ հանգույց է, որտեղ հաստատվում են առցանց փոխհարաբերություններ՝ իրար կապելով իրականն ու երևակայականը: Կիրերտարածությունը որպես հասարակական համակցության տարածք կարևորվում է նաև մշակույթի տեսանկյունից: Հենց սա է պատճառը, որ 1990-ական թվականներից սկսած *cyberspace* եզրույթը սկսեց զուգորդվել *internet*, իսկ ավելի ուշ նաև համաշխարհային ցանցի (*world-wide web*) հետ: Անկախ եզրույթների առատությունից, համատեքստն անմիջապես ընկալվում է որպես

գիտաֆանտաստիկ, քանի որ գիբսոնյան հորինված եզրույթներն արդեն չեզոք միավորներ չեն և ճանաչողականին զուգահեռ իրացնում են նաև ներգործման գործառույթ: Ավելին, դրանք իրենց ազդեցության դաշտ են ներառում նաև իրական եզրույթները՝ նպաստելով երևակայական գիտապատկերների ստեղծմանը: Արդյունքում ճանաչողական գործառույթը դրսևորվում է պատկերավորի հետ միաձուլ՝ դարձնելով գիտաֆանտաստիկ եզրույթներն էլ ավելի բազմաբովանդակ ու գրավիչ թե՛ գիտական և թե՛ գեղարվեստական տեսանկյունից:

Կիբերփանկ ժանրին բնորոշ ոճական դաշտ ձևավորելու գործում մեծ է հունարենից կամ լատիներենից փոխառնված, մեծ քանակությամբ հիբրիդաեզրույթներ ստեղծող հետևյալ արմատների և ածանցների դերը՝ *bio-* (*bioroid*, *bioware*), *cyber-* (*cyberpet*, *cyberpsychosis*), *chrome-* (*chromebangers*), *micro-* (*microprogm*, *microchip*), *-tech* (*hi-tech*, *lo-tech*) և այլն: Հենց այս բաղադրիչներից կազմված բառերն են, որ այսօր լայնորեն կիրառվում են գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում:

Գիտաֆանտաստիկ ոճի ձևավորման և զարգացման գործում մեծ է նաև հապավում-եզրույթների դերը: Հարկ է նշել, որ դրանք հատկապես ցայտուն են արտահայտվում կիբերփանկում: Որպես կանոն, հապավումը եզրույթաստեղծման քիչ տարածված եղանակ է, բայցևայնպես, ճիշտ չէ թերագնահատել դրա արժեքը, տարածվելու միտումը ու լայնորեն կիրառվելու փաստը, որի պատճառն ամենայն հավանականությամբ այն է, որ եզրույթաստեղծման այս եղանակը լեզվական միջոցների տնտեսման ակնհայտ միտում է դրսևորում: Ինֆորմացիայի հոսքի հզորացմանը, մշակութային առաջընթացի, զանգվածային հաղորդակցման միջոցների արագընթաց աճի, գիտատեխնիկական նորանոր ճյուղերի առաջացման ու փոխազդեցության և տարբեր զարգացած երկրների գիտնականների միասնական աշխատանքի շնորհիվ, գիտական նորանոր առարկաների, երևույթների, ինչպես նաև գործընթացների բարդացման ու բարդ հասկացությունների ստեղծման արդյունքում լեզվում հաճախ կուտակվում են բազմաբաղադրիչ եզրույթաբանական տարրեր, որոնք էլ ենթարկվում են հապավման: Այսինքն, հապավումը հանդես է գալիս որպես լեզվական հնարավորությունների շռայլումը յուրատեսակ ձևով կանխարգելող միջոց: Կիբերփանկյան շատ հապավումներ (*AI - Artificial Intelligence*, *APC - Armored Personnel Carrier*, *ASIST - Artificial Sensory Induction System Technology*, *CIRS - Cybernetic Implant Rejection Syndrome*, *Com-int - Communications Intelligence*, *CSC - Computer Sabotage Consultant*, *DDR - Difficult Data Retrieval*, *DI - Digital Intelligence*, *FIBUA - Fighting in Built - Up Areas*, *MAX-TAC Maximum force Tactical - Maximum force Tactical* և այլն) նաև ոճատարբերակիչ դեր են կատարում ժանրում:

Երրորդ գլխում («Կիբերփանկ ժանր բնորոշող լեզվաոճական առանձնահատկությունները») փորձ է արվում վեր հանել տվյալ ժանրում լայն

կիրառությունն ունեցող հարուստ ու բազմաբովանդակ եզրույթային բառաֆոնդ ներկայացնող նորաբանությունները, նորաբան ժարգոնային եզրույթներն ու եզրույթային շարույթները, որոնք, հայտնվելով ոճական հնարների և արտահայտչամիջոցների կառույցում, առավելապես են ընդգծում գիտաֆանտաստիկ ոճի յուրօրինակությունը: Այդպիսի կառույցները ոչ միայն լրացուցիչ նրբերանգներ են հաղորդում գիտաֆանտաստիկ խոսքին, այլև դրսևորում են մարդկային մտածողության նոր ու անհայտ շերտերը բացահայտելու կարողություն:⁸ Ուրիշ խոսքով՝ եզրույթին առաջադրված գիտական սահմանելիության պահանջը, ըստ երևույթին, ճիշտ կլինէր համարել պայմանական այն առումով, որ եզրույթային իմաստը չի կարող լինել բացարձակ ճշգրիտ, այն պայմանականորեն կամ հարաբերականորեն է ճշգրիտ: Ինչպես պարզվում է փաստական նյութի բազմաթիվ օրինակների վերլուծությունից փոխաբերությունների և գեղարվեստական համեմատությունների (*wore idealized holographic vaginas on their wrists, all the data in the world stacked up like one big neon city, watching motes dance in the diluted sunlight that filtered through the grid overhead, spider-armed manipulator stirs the refuse of stray-light's brief, clotted history, her information profile like a child's drawing, Human DNA spreading out from gravity's steep well like an oilslick, The drug hit him like an express train*) կառույցում եզրույթների ու մասնագիտական բառապաշարի առկայությունը կարծես սթափ է պահում ընթերցողին և կանխում է երևակայության թռիչքով ստեղծված պատկերների մեջ խորասուզվելու վտանգը: Այդ պատկերներն, իհարկե, կարող են ոճական նույն ուժով օժտված լինել, ինչ գեղարվեստական գրականության մյուս դրսևորումներում, սակայն դրանց երևակայականությունը չի կարող վերածվել անիմաստ պատրանքների, գիտակցականի տարրերը մշտապես ուղեկցում են գիտաֆանտաստիկ ոճին բնորոշ երևակայական պատկերներին:

Կիբերփանկ ոճում առանցքային դերակատարություն ունի թմրանյութերի և դեղերի օգտագործման թեման, որն էլ համարվում է նոր դարաշրջանի մեծագույն աղետը: Հետազոտության այս գլխում դասակարգվում և աղյուսակի տեսքով ներկայացվում են գիտաֆանտաստիկ գրականության հեղինակների կողմից ստեղծված թմրադեղերի, հալյուցինոգեն կամ դեղային այլ միջոցների անունները (*Cactus Juice, Can-D Cerebomb Crystal Twist Dancer The Fear Flower of Life Hazia Slo-Mo Snow Crash SQUID Triptocaine Zom-B* և այլն), դրանց ստեղծման աղբյուրներն ու օգտագործման հետևանքները՝ արժևորելով նաև դրանց ոճական նշանակությունը: Կիբերփանկ ոճի ձևավորման գործում մեծ է նաև ապագա աշխարհի պատկերաստեղծմանը նպաստող գունային միավորների (*grey, black, steel, silver*), հեղինակի վառ երևակայության և մեկից ավելի եզրույթների հարադիր բառաբարդման հիման վրա ստեղծված

⁸ Lakoff G., Johnson M. *Metaphors We live by*. Chicago, University of Chicago, 1980.

ինքնատիպ հարադրավոր բարդությունների (*six-year-old-Hitachi entertainment module, ten double-edged fourcentimeter scalped blades slid, low-temp isotropic carbons, x-rays of short-circuited sexual energy, N-methyl -4-phenyl-1234, Ono-Sendai twenty-point into Hitachi forty, a seven-function force-feedback manipulator, fifty-first generation of Maas-Neotek biochips, eight-point servo calibration procedure, ice-blu shaved-velour number*), եզակի հատուկ անունների (*Maas-Neotek, Zeiss Ikon Optics, Borg-Ward Cargo Drone Airships, Dallas-Fort Worth Sunbelt Co-Prosperity Sphere, Gucci Fine Watches & Accessories, Lando-Acheson Lighting, Maas Biolabs GmbH, Ono-Sendai, Akihabara Business Modules, Cathode Cathay*) դերն ու նշանակությունը: Համընդհանուր ոճն իր գեղագիտական հարստությամբ, լեզվա-ոճական արտահայտչաձևերի բազմազանությամբ, սյուժետային-բովանդակային տարողունակությամբ և ծավալով գրեթե անսպասելի է: Այս ասպարեզի գրողի համար մեծագույն նվաճումը բառային արվեստի միջոցով «աշխարհ» ստեղծելն է, պայմանականություններով հագեցած, անիրական դեպքերով և իրադարձություններով լեցուն մի իրականություն պատկերելը, որը սակայն իր առարկայական դրսևորումներով, բարոյահոգեբանական մթնոլորտով և գեղարվեստական պատկերավորությամբ պետք է համոզիչ ու պատճառաբանված լինի: Այն զուգահեռ աշխարհները, որոնց գոյությունը փորձում է պատկերել գիտաֆանտաստիկ գրականությունը, փաստորեն գրողների ստեղծած երևակայական աշխարհներն են, երկիր մոլորակի կյանքի և իրականության վերացարկված, գեղարվեստական պատկերները:

Կատարված ուսումնասիրությունը գալիս է հաստատելու, որ սոցիալ-հասարակական և գիտա-տեխնոլոգիական առաջընթացի հետ սերտորեն կապված գիտաֆանտաստիկ ժանրը գիտականի և գեղարվեստականի միասնության վրա հիմնված խոսքն է, ժամանակակից գործառական-ոճական դրսևորում: Գիտական, մշակույթային, սոցիալ-հասարակական, ուսուցողական և լեզվական առումներով յուրահատուկ արժեք է գիտական ֆանտաստիկայի կիբերփանկ ժանրը, որն, ըստ էության, գիտության հետ ամենասերտ առնչությունն ունեցող գեղարվեստական խոսքն է և գեղարվեստական ոճի մյուս բոլոր դրսևորումներից տարբերվում է լեզվական որևէ ուշագրավ միավորի, գիտական որևէ եզրույթի կամ վերացական որևէ արտահայտության կիրառության շնորհիվ: Ապագայի մարդու ֆանտաստիկ կերպարը և տիեզերական արտասովոր քաղաքակրթությունները միայն ղեկորացիաներ են՝ ավելի ցայտուն պատկերելու համար հողից ու մեր ժամանակներից չկտրված մարդուն: Գիտության ու տեխնիկայի պայթյունն առաջացրեց մարդկության առջև նոր, մինչև այժմ անհայտ խնդիրներ է դնում, ոչ միայն քաղաքական և տնտեսական, այլև սոցիալ-հասարակական, հոգեբանական, բարոյական և առաջացնում է այդ խնդիրները պատկերելու, քննելու, քննադատելու, լուծումներ փնտրելու գրական ոճաձևի՝ գիտաֆանտաստիկայի կիբերփանկ

Ժանրի խոսքային նորանոր դրսևորումների և դրանց ուսումնասիրության պահանջ:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները.

- Կիբերփանկը քննում է անսահման համացանցը, որտեղ մտահայեցական խոսքը գրեթե միշտ առաջ է անցնում ժամանակից, քննում գիտական վարկածների ազդեցությունը մարդու վրա: Գործառական ոճերի համակարգում որպես գեղարվեստական ոճի գիտաֆանտաստիկ դրսևորման ենթաժանր ներկայացող կիբերփանկն իր հերթին կարող է բաժանվել այլ ժամանակակից տարատեսակների, որոնցից են դիզելփանկը, դեկոփանկը, բիոփանկը, նանոփանկը:
- Կիբերփանկը արտահայտչականության և տրամաբանականության խոսքային ինքնատիպ փոխներթափանցում է, որտեղ օրգանապես միահյուսվում են գիտականն ու գեղարվեստականը, հաղորդման և ներգործմա գործառույթները:
- Կիբերփանկյան յուրօրինակ ոճը, հենվելով որոշակի ներլեզվական և արտալեզվական նորմերի վրա, գլխավորապես պայմանավորված է համակարգչային ոլորտի գիտական նորաբանությունների, հապավում-եզրույթների, եզրույթացված կապակցությունների լայն կիրառությամբ, որոնք հարաբերակցության մեջ մտնելով գեղարվեստական խոսքին բնորոշ տարրերի հետ՝ ստեղծում են հաղորդման և ներգործման գործառույթների իրացմամբ արտահայտվող միջավայր, որն անմիջապես ընկալվում է որպես գիտաֆանտաստիկ:
- Կիբերփանկ ստեղծագործությունները պարունակում են մեծ քանակությամբ ինչպես ճշգրիտ, այնպես էլ դիպվածային, անիրական գիտական եզրույթներ, ժարգոնային միավորներ, գռեհկաբանություններ, հորինված գիտական հապավումներ, կաղապարային և առնշանակային շարույթներ, համեմատություններ, փոխաբերություններ, որոնք բոլորը նպաստում են մի կողմից հաղորդման, մյուս կողմից՝ ներգործման գործառույթի իրացմանը:
- Կիբերփանկն օգտագործում է առանձին խմբեր կազմող մեծ քանակությամբ ոճակազմիչ եզրույթներ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիբերփանկյան եզրույթային համակարգը տաքսոնոմիկ է, այսինքն այն ճյուղավորվում է՝ ստեղծելով եզրույթների հետևյալ բնորոշ խմբերը. կվազիեզրույթներ, պրոֆեսիոնալիզմի տարրերով եզրույթներ, փոխառություն-եզրույթներ, ինտերնացիոնալիզմներ, հիբրիդեզրույթներ:
- Կիբերփանկյան բառապաշարում առանձնահատուկ տարածում ունեն եզրույթային հետևյալ իմաստային խմբերը. անձնանուն եզրույթներ,

ժարգոնային և սլենգային տարրերով եզրույթներ, բացասական երանգավորում ունեցող, ստորացուցիչ, վիրավորական միավորներ:

- Ժամրի համար բնութագրական են ինքնուրույն նշանակություն և պարզ կամ բարդ կառուցվածք ունեցող եզրույթների կազմի մեջ մտնող տարրերը, որոնք հիմնականում ներկայանում են համակարգչային տեխնոլոգիայի հետ առնչվող իրական կամ հորինված միավորներով:
- Գիբսոնյան ոճին բնորոշ եզրույթների շարքում առանձնանում են կառուցվածքային հետևյալ խմբերը. Ing+N, Participle2+N, Compound A+N, A+A+N, A+N+N, A+Participle2+N, Participle2+Comp. A+N, Participle2+A+N հապավում-եզրույթներ:
- Եզրույթների միջոցով իրացվող ճանաչողական, անվանողական, իմաստային, հաղորդակցական, գործաբանական և էվրիստիկ գործառույթների հետ կողք-կողքի հայտնվող ներգործման գործառույթի շնորհիվ հաճախ կիբերփանկյան եզրույթները վերնշանային արժեք են ձեռք բերում: Մեծ է նաև էվրիստիկական գործառույթ իրացնող՝ գիտական ճանաչողությանն ու ճշմարտության բացահայտմանն ուղղված եզրույթների դերը այս ժանրում:
- Կիբերփանկի գեղարվեստական ուղղվածությունը արտահայտվում է մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների, գունային խորհրդանիշերի լայն կիրառությամբ: Ընդ որում, շատ հաճախ համեմատություններն ու փոխաբերություններն արտահայտվում են եզրույթային տարրերի հետ միաձուլվելով: Նշված արտահայտչամիջոցների գործառույթները չի սահմանափակվում խոսքը գունագարդելու և հռետորական ազդեցություն թողնելու միտմամբ. դրանք դրսևորում են նոր հնարավորություններ ու ունակություններ՝ բացահայտելով մարդկային մտածողության նոր ու անհայտ շերտեր, թափանցելով իրական կյանքի նորանոր բնագավառներ:
- Ինչպես Վ. Գիբսոնի եռագրության, այնպես էլ առհասարակ գիտաֆանտաստիկ ժանրի համար դեղամիջոցների և թմրադեղերի անունների կիրառությունը ոճատարբերակիչ առանձնահատկություն է:
- Վերլուծության ենթարկված փաստական նյութը հաստատում է այն գաղափարը, որ կիբերփանկ ժանրում և առհասարակ գիտաֆանտաստիկ ստեղծագործություններում ոճական պատկերավոր միջոցները հեղինակի վառ երևակայության արդյունք են և իրացնում են նաև ընդգծված ճանաչողական գործառույթ:

Ուսումնասիրության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. *Metaphor: an Element of Imagery in Gerald Durrel's "My Family and other Animals"* //Armenian Folia Anglistika, 1-2 (6). Yerevan: Lusakn, 2009, pp. 115-119.

2. *Հ. Ուելսի «Ժամանակի մեքենան» ստեղծագործությունը որպես գիտաֆանտաստիկ ժանրի իրացում: // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, 3: Երևան, Զանգակ 97, 2011, էջ 13-20:*
3. *Եզրույթների լեզվաոճական առանձնահատկությունները Վ. Գիրսոնի կիբերֆանկ ժանրի ստեղծագործություններում: // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, 4: Երևան, Լուսակն, 2012, էջ 54-63:*
4. *Գիտաֆանտաստիկայի և նրա կիբերֆանկ ժանրի զարգացման ուղիները: // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, 5: Երևան, Լուսակն, 2013, էջ 142-150:*
5. *Դեղամիջոցների և թմրանյութերի անվանումների նպատակային կիրառությունը կիբերֆանկ ժանրում: // Աստղիկ, Գիրք թարգմանչաց, № 26 , էջ 386-403*

NARINE NIKOGHOSYAN

*The Linguostylistic Sciencefictional Peculiarities of Cyberpunk
(with special reference to William Gibson's Works)*

SUMMARY

Science fiction is a literary genre which is sensitive not only to scientific-technological changes but also to socio-political developments in the world. Science fiction and all its functional varieties, including **the object of the study** – the cyperpunk genre of science fiction, represent a combination of the real and the unreal, the logical and the imaginative, a system of interrelated factive and fictive linguistic units which realize the communicative aim of the genre. Since its creation in 1980s, cyperpunk has tried to investigate the infinity of the cyberspace through its original language and style.

The factive material analysed in the present research represents an imaginative cyberworld in the light of present and future technological developments.

The novelty of the investigation is conditioned by the key role cyberpunk plays in the development of the English language today. As an image of the internet the genre refers to the concepts of virtual reality, artificial intellect, cyborgs, biorobots, huge internet corporations, hackers, bioinplants and drugs, reflected in peculiar and original discourse, the linguo-stylistic study of which has become a necessity today.

The research **aims** at disclosing functional and stylistic, lexical and morphological peculiarities of cyberpunk through analyzing linguistic units the particular choice and arrangement of which is conditioned by numerous extralinguistic factors and helps to reveal the communicative intentions of the given genre. To realize the mentioned objective we have focused on the following **issues**:

1. The clarification of the functional importance of science fiction in general and cyperpunk in particular;
2. The place and role of cyberpunk in the functional system of the English language;
3. The analyses of linguistic units which act as discourse markers in science fiction and in cyperpunk: real and invented terms, their semantic and structural peculiarities, their classification;
4. Jargon and slang terms, specificities of their application in cyperpunk;
5. Abbreviations and neologisms with terms as indispensable elements of their construction.

To realize the mentioned objectives, the following **methods** have been applied in the research: the method of qualitative and quantitative analysis, the method of linguostylistic analysis and the taxonomic method of analysis. The latter is especially relevant in the study of cyperpunk terms.

From the **theoretical perspective** the results of the study are, undoubtedly, of great value and importance as they make it possible to clarify the functional character and linguostylistic qualities of cyberpunk, thus greatly contributing to the development of functional stylistics, the terminological science in general and speech analysis in particular.

The adequate perception and interpretation of the problem under study achieved through various analyses has great **practical value** as the present thesis will be productive in other spheres of functionalism, terminology and in the study of cognitive structures of language. The results of the research can also be used in theoretical and practical courses, textbooks and manuals as well as be helpful to specialists who are involved in creating modern terms for information technology.

The work consists of an introduction, three chapters, a conclusion and a list of references. The basic statements made in the introduction and the chapters are supplied with additional explanations in the notes and the Appendix of supplementary cyberpunk terms. The introduction presents the subject matter, the topicality and novelty, the practical and theoretical significance of the research in the proposed field as well as the methods applied to the investigation. Chapter one reviews science fiction as a functional-stylistic register of speech based on the correlation of factive and fictive linguistic units and discusses the creation and development of cyberpunk as a unique genre of science fiction. Chapter two provides a detailed analysis of cyberpunk terms, focusing on the linguostylistic peculiarities of cyberpunk terminological system at large. In chapter three an attempt is made to reveal functional and linguostylistic peculiarities typical of words, word combinations, syntagmas that are part of the cyberpunk linguistic system and are means of realization of a combined logical-imaginative function of the genre. The Conclusion presents the main findings of the research.

НАРИНЭ НИКОГОСЯН

Лингвостилистические научно-фантастические особенности жанра киберпанк (на материале произведений Уильяма Гибсона)

Научная фантастика – литературный жанр, который является чувствительным не только к научно-технологическим изменениям, но и к социально-политическим событиям в мире. Научная фантастика и все ее функциональные разновидности, в том числе объект нашего исследования – киберпанк как жанр научной фантастики, представляют собой сочетание реального и нереального, логического и образного, фактических и фиктивных языковых единиц, реализующих коммуникативную цель жанра. С момента своего создания в 1980-х годах, киберпанк исследовал бесконечное киберпространство с помощью оригинального языка и стиля.

Трилогия Уильяма Гибсона *Neuromancer, Count Zero, Mona Lisa Overdrive* – **фактологический материал** и **объект** разностороннего лингвистического анализа, представляет кибернетический мир в свете нынешних и будущих технологических достижений.

Новизна исследования обусловлена той ключевой ролью, которую киберпанк играет в развитии английского языка сегодня. Как образное выражение интернета жанр относится к понятиям виртуальной реальности, искусственного интеллекта, огромных интернет-корпораций, хакеров, биоплантов, лекарств и наркотиков, отраженных в своеобразном и оригинальном дискурсе киберпанка. Лингво-стилистические исследования этого современного жанра сегодня уже стали необходимостью.

Целью исследования является раскрытие функциональных и стилистических, лексических и морфологических особенностей киберпанка путем анализа языковых единиц конкретного выбора и расположения, которые обусловлены многочисленными экстралингвистическими факторами и помогают выявить коммуникативные намерения жанра. Для достижения указанной цели мы сосредоточили внимание на следующих вопросах:

1. Уточнение функциональной значимости научной фантастики в целом и, в частности, киберпанка;
2. Место и роль киберпанка в функциональной системе английского языка;
3. Анализ языковых единиц, которые действуют как дискурсивные маркеры в научной фантастике и в киберпанке: реальные и придуманные термины, их семантические и структурные особенности, их классификация;
4. Жаргон и сленг-термины, особенности их применения в киберпанке;

5. Сокращения и неологизмы с терминологическими единицами.

В исследовании были применены следующие **методы**: метод качественного и количественного анализа, метод лингвостилистического анализа и таксономический метод анализа. Последний метод особенно актуален при изучении киберпанк-терминов.

С **теоретической** точки зрения результаты исследования имеют большое значение, так как они определяют и уточняют функциональный характер и лингвостилистические качества киберпанка, таким образом вносят определенный вклад в развитие функциональной стилистики и терминологической науки в целом и в анализе киберпанк дискурса, в частности.

Данное исследование имеет большое **практическое значение**: оно может быть продуктивным в других сферах функциональной стилистики, терминологии и в исследовании когнитивных структур языка. Результаты исследования могут быть использованы в теоретических и практических курсах, при составлении учебников и учебных пособий, а также в разных научно-исследовательских изысканиях и в создании современных терминов информационных технологий.

Исследование состоит из введения, трех глав, заключения и списка литературы. Основные положения, выдвинутые в работе, дополняются примечаниями и приложением киберпанк-терминов. Во введении обосновывается тема исследования, ее актуальность и новизна, практическое и теоретическое значение, а также методы исследования. В Главе первой научная фантастика рассматривается как функционально-стилистический регистр языка, основанный на корреляции фактических и фиктивных лингвистических единиц и обсуждается создание и развитие киберпанка как уникального жанра научной фантастики. В Главе второй изучаются и анализируются киберпанк-термины, ориентируясь на лингвостилистические особенности терминологической системы киберпанка. В Главе третьей предпринимается попытка выявить функциональные и лингвостилистические особенности типичных слов, словосочетаний, синтагм, которые являются частью языковой системы киберпанка и средством реализации комбинированной образно-логической функции жанра. Заключение содержит основные выводы исследования.

